ՄԻԱՄԻՏ ԳԵՂՑՈՒ ԽԵԼՈՔ ԱՂՋԻԿԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Հին ժամանակ Լոռու գեղերից մնում ապրում էր մի ծեր մարդ: (Ասենք թե էդ գեղը հենց հայի Գյառ-Գյառն էր)։ Նա ուներ էրկու աղչիկ։ Մինը մարդու էր տվել Փամբակում, մինն էլ տանն էր: Էդ տան աղջիկը շատ խելոք էր, տանանդա ու շատ էր սիրուն։ Շատ էլ ծերը Էնքան հարուստ չէ, ամա աղջիկը իր խելքով ու շնորհքով սաղ գեղումը գովական էր։ Ընթավուր ձեռքի ջուրք ուներ, ընթավուր սուր միտք ուներ, որ ամենքը զարմացել էին նրա վրա ու ասում էին, թե նրա շնորքը տվովի ա, ասսատուրք, թե նա իմաստուն ա ու շատ հնարագետ։
Մի օր էդ աղջիկը ասավ հորը.— Ապի, գնա մենձ քըվորս կուշտը, տես փեսեն, քիրս, ըրեխեքը ո՞նց են ու սաղ-սալամաթի խաբար բի։
Ծերունին վեր կացավ, գնաց Փամբակ, մի քանի օր մենձ աղջկա կշտին կացավ ու ետ էկավ։ Ճամպին նրան ռաստ էկան էրկու ջահել տղա։ Նրանց ղըլըղը թեպետ հասարակ էր, ամա նրանց ասիլ-խոսալուց ծերը բրավուրդ արավ, որ նրանք հասարակ մարդիկ չեն։
Երբ էկան հասան Փամբակա ջրին, նրանցից մինն ասավ ծերին.— Ծերունի, ջրի վրա կարմունջ չկա, արի մինս ու մինս կարմունջ դառնանք, մեկելներս էլ վրովն անց կենան։
Ծերը զարմացավ, ասավ.— Այ որդի, ոնց որ բրավուրդ եմ անում, դուք խելոք տղեք եք։ Ամա հըմի ընթավուր սարսաղ բան. եք ասում. էդ ոնց կըլի՞. մի մարդ կարա՞ էս եքա ջրի վրա կարմունջ դառնա։
Էդ տղերքն էլ բան չասին։ Ջիմն էլ բոբիկացան ու ջուրն անց կացան։ Երբ որ հասան Դըվալա սարին, նրանցից մինն ասավ ծերին.— Ծերունի.— էս սարը շատ բարձրն ա։ Մենք մինչի սարի գլուխը հասնիլը՝ շատ կբեզարենք, արի մինս ու մինս նարդիվան դառնանք, մեկելներս էլ վրովը բարձրանանք սարը։
— Այ որդի,— ասավ ծերը,— էլի մի սարսաղ բան ասեցիք, մի մարդ կարա՞ էս եքա սարին նարդիվան ըլի։
Անծանոթ տղեքը էլ բան չասացին։ Սարը բարձրացան՝ Դըվալա սարը։
Էդ սարի գլխից Լոռին ոտքիդ տակին ա, թամաշ արին. ի՞նչ տեհան. սար ու ձոր ալ ու ալվան ծաղիկի մեջ կորած, դզերն էլ կանանչ արտերով, անդ ու անտառով զուգված, զարթարված։ Չորս կողմը սարեր, կոլոր պար բռնած, մեջտեղը ձորեր՝ խոր ու ահռելի աջ ու ձախ կտրած։ Դըվեր էկան Դվալա սարից։ Մայիս ամիսն էր, արտերն էկել, հասկեր ին քշել ու ցնծին տալի։
Մի լավ արտի կշտով անց կենալիս՝ էդ տղերանցից մինն ասավ ծերին։— Ծերունի, յարաբ, էս արտի տերը սրա ցորենը կանանչուց ա կերե՞լ, թե՞ պտի հնձել, կալսել ու եդնա ուտել։
Ծերը զարմացավ ու նրանց ասավ.— Այ որդի, էլի մի սարսաղ բան ասացիք. ախար արտը կանանչուց կուտվի՞։ Մինչև որ չհասնի, չըհնձին, չկալսեն, չորացնեն ու տանեն ջաղացումն աղան, եդնա հաց անին, ո՞նց կարան ուտել։
Տղերքն էլի սուս կացան։
Երբ հասան գյուղը, մութն ընկել էր, նրանք ծերին հարցրին.— Էս գեղումն ո՞վ կա, որ մեզ ղոնախ ընդունի։
— Գնացեք,— ասավ, Խամցըցոնց տունը, նրանք գյուռ օջախ են ու ղոնախասեր։ Նրանց մենձը՝ Խամսալու Ասատուրը, Ղարաբաղա Խամսալուի մելիքություններից ա էկել։ Ասսու օրը նրանց ղոնախը կտրում չի։ Ոնց որ ասում են, էն անցնող թևավոր ղշին էլ հաց ա ուտացնում ու ճամպա դնում։
Երիտասարդները գնացին Խամցըցոնց տունը, իսկ ծերն էկավ իր տունը։

— Ապի, քիրս ո՞նց էր, ըրեխեքը ո՞նց ին,— հարցրեց աղջիկը։
— Շատ լավ ին, որդի, ու քեզ ու հարցնողանցը շատ բարով ին անում։
— Է՛, լավ, ապի գնացիր աշխար ման եկար, էլ ուրիշ ի՞նչ տեհար, ի՞նչ իմացար, պատմի տենենք։
— Ինչ պտի տենիլ, որդի, աշխարք ա էլի, ով ունի՝ ուտում ա, խմում, քեֆ անում, ով չունի՝ վայ ա տալի իր սև օրը, արին-քըրտինք ա անում, որ մի կտոր չոր հաց ունենա։— Հա՛, ըղորդ, աղջիկ ջան, ըսօր ինձ հետ ընկերացան էրկու ջահել տղա։ Նրանց ժաժ գալուց, խոսք ու զրիցից ըրևում էր, որ նրանք հասարակ մարդիկ չեն՝ խելոք ու ուսումով տղեք են, ամա ճամպին մի էրկու սարսաղ բան ասին։
Ու ծերը պատմեց կարմունջի բանը։ Աղչիկը քմծիծաղ տալով ասավ.— Ապի, դու շատ միամիտն ես. նրանք քեզ կապանք են ասել, դու գլխի չես ընկել։ Դու նրանց «սարսաղ» ես ասել, սարսաղը նրանք չեն։
— Բա, ո՞նց որդի, մի մարդ կարա՞ եքա ջրին կարմունջ դառնա։
— Է, ապի, երբ նա ընենց ասավ, դուն էլ կասեիր. «Ես ծեր եմ որդի, կարող չեմ կարմունջ դառնալ, մինդ ու մինդ կարմունջ դառեք, ես էլ վրովն անց կենամ», էն վախտը նրանցից մինը կբոբիկանար, քեզ կշալակեր, ջուրն անց կկացներ. նա կդառնար քեզ համար կարմունջ։
— Ղորթ որ է,— գլխի ընկավ ծերը ծրծորանքը քորելով,— էդ լավ, ասենք, ամա մի մարդ կարա Դվալա սարին նարդիվան դառնա՞։
Ու պատմեց նարդիվանի բանը։
— Է՛, ապի,— ասավ աղջիկը,— էլի գլխի չես ընկել, երբ նա ընենց ասավ, դուն էլ կասեիր. «Ես ծեր եմ, որդի, կարալ չեմ նարդիվան դառնալ, մինդ ու մինդ նարդիվան դառեք, ես էլ վրովը բարձրանամ սարը»։ Էն վախտը նրանցից մինը վեր կուներ ու կսկսեր մի լավ հեքիաթ, մի նաղլը, յա մի պատմություն։ Դուն էլ անգաճ կանեիր ու սարը հենց կբարձրանայիր, որ չէիր իմանալ, թե, ո՞նց բարձրացար։ Էդ կդառնար քեզ համար նարդիվան։
— Ղորթ որ է,— ասավ ծերը.— էդ էլ ես լավ ասում։ Լավ, էդ ասենք ըթենց։ Ամա արտը կանանչուց կուտվի՞։
— Է, ապի, ապի,— ասավ աղջիկը,— էդ հասարակ կապանքն էլ չես գլխի ընկել։ Ախար մի մարդ, երբ որ պարտքով ա վարում, ցանում, որ հնձի, կալսի, պարտքատերը կգա, կտանի, էդ ասելն է՝ նա կանանչուց ա կերել։ Իսկ էն մարդը, որ իրան աշխատանքովն ա վարել ու ցանել, նա իհարկե, արտը որ հասնի, կհնձի, կկալսի, ամբարը կլցնի ու ինքը կուտի։
— Աղջիկ ջան,— ասավ միամիտ ծերը.— ըտունք հլէ դու լավ էս ասում։ Ես ո՞նց չեմ գլխի ընկել է։ Զուր էլ էն մարդկանցը անպատիվ ի անում։ Հե՛յ գիդի ծերություն...
— Բա էն տղեքն ի՞նչ էլան, ապի,— հարցրեց աղջիկը։
— Գնացին Խամցըցոնց տունը, որդի։
— Է՛հ, ապի, ըտտեղ էլ եդ կացինը քարովն ես տվել։ Ախար նրանք ի՞նչ կմտածեին։ Չեն ասի՞լ էս մարդուն իսկի հասկացողության չուներ։ Սաղ օրը նրանց հետ ճամպա ես էկել։ Անծանոթ մարդիկ քեզ հետ էկել են քու գեղը։ Բա դու տուն չունեի՞ր, մի կտոր հաց չունեի՞ր, մի էրկու տեղաշոր չունեի՞ր, որ քու ճամպու ընկերնուն համեցեք իր արել քո տունը, քան թե վեր ես անում ու ղրկում խալխի տունը։ Որ գան էդ բանը պատմեն ուրիշներին, չէ՞ որ մենք ծիծաղատեղ կդառնանք։
Ու աղջիկը ձեռաց մի մենձ կոլոր եղլղալի գաթա հազիր արա վ, թխեց, տասներկու հատ էլ ձու էփեց, բողչումը կապեց, տվուց հորն ու ասավ.— Ապի, էս բաները տար էն տղերանցը տուր, ամեն բան հասկացրու ու ասա. «Աղջիկս նեղացավ, որ ձեզ իմ տունը չեմ կանչել, հմի ձեզ համար րիգնահաց ա հազիր արել, ղրկել, որ անուշ անեք»։

Ծերը բողչեն վեր կալավ ու գնաց։ Ճամպին նոր միայն միտն ընկավ, որ ինքը շատ սոված ա, սիրտը ձեն ա ածում։ Մի ձուն կլպեց, գաթի պռնգիցն էլ մի քիչ կտրեց ու ձվի հետ կերավ. խեղճի թաղարը կտրել էր։ Էկավ տղերանց կուշտը, ներողություն խնդրեց ու ամեն բան նրանց պատմեց, որ նրանց ասածը ինքը գլխի չի ընկել, որ իր աղջիկն ըսենց ու ըսենց ամեն բան նրան հասկացրուց ու թե բողչեն նրանց համար փեշքաշ ա ղրկել։
Տղերքը իրար ըրեսի մտիկ արին ու ձեռաց գլխի ընկան, որ աղջիկն էլ իրանց կապանք ա ղրկել, բողչեն բաց արին ու մինն ասավ.— Էս ո՞նց ա, ծերունի, ձեր աշխարումը տարին տասն ու մին ամիս ա, ձեր լիսինն էլ օրապակա՞ս։
Ծերը նրանց էդ ասածից էլի բան չի գլխի ընկավ, փոր-փոշման էկավ տուն։
— Հը, էկա՞ր, ապի,— շեմքումն աղաքը կտրեց աղջիկը,— էն տղեքն ի՞նչ ասին։
— Է, մի սարսաղ բան էլ հմի ասին, թե ձեր տարին տասն ու մին ամիս ա ու ձեր լիսինն էլ օրապակաս...
— Է՛, ապի, ապի,— նեղացած ասավ աղջիկը,— բերանդ ինչ էր կրակ ընկել. ի՞նչի ինձ խայտառակ արիր, ի՞նչ կըլեր, որ ճամպին տանելիս մի ձուն չէիր կերել ու գաթի պռնգիցն էլ չէիր կերել... կարալ չէի՞ր համբերես ու գաս տանը հաց ուտե՞ս։
Ծերունին զարմացավ, թե աղջիկը իր արածը ո՞նց իմացավ ու սուս կացավ։
Ախար նա՝ խեղճը, գլխի չէր ընկել, որ իր աղջկա կապանքն էն էր, որ էն տղերանցը հասկացրել էր, թե իր ամիսներն ու տարինին էկել թըմամել են, ու թէ ինքն էլ լրված-լուսնի պես հասած ա...
Մյուս օրը ըռավոտը վաղը՝ գշերհանա աղջիկը վեր կացավ, տուն ու դուռ հըվաքեց, օթախը վեր քաղեց, թամուզեց, զուքեց, զըրթաբեց, օջախը վառեց ու կերակրի թաղարեք տեհավ։ Երբ որ պարզ լիսացավ, հորն առավ.— Ապի, գնա, էն տղերանցը համեցեք արա մեր տունը, թող գան քու օջախը մտնեն, քու մի կտոր հացը կտրեն։
Ծերը գնա էն տղերանցը կանչեց իր տունը։ Տղերքը համաձայնեցին։ Նրանք սրտով ուզում էին միամիտ ծերի խելոք աղջկան տեսնել։
Էկան, աղջիկը նրանց շատ քաղաքավարի ընդունեց։ Հետները զրից արավ ու ասավ.— Շատ ցավում եմ, որ իմ հերը իրա միամտությունով ձեզ նեղացրել ա, ձեր ասածնին չի հասկացել, ձեզ պես արժանավոր ղոնախնու, ճամպի ընկերնուն իր տունը չի հրավիրել, դռնեդուռ ա գցել ձեզ անծանոթ էս գեղում։ Հըմի ես խնդրեցի, որ գաք մեր տունը, մեր մի կտոր հացը կտրեք ու ետո բարով գնաք ձեր ճամպեն։
Աղջիկը հետը զրից էր անում, հետն էլ կերակուրը պատրաստում, հացի թաղար եք տենում, դուս ու տուն անում։
Անծանոթ տղեքը աչքները աղջկանը գցած՝ թամաշ ին անում, ոտից գլուխ չափում։ Տեհան, դրուստ որ աղջիկը համ շատ խելոք ա, իմաստուն ա, համ էլ շատ սիրուն ա։ Միայն չէին հասկանում էն ընչիցն ա, շատ ամաչելուցն ա, թե մորուց ա, աչքերի մինը վախտ-վախտ շլություն ա շանց տալի։ Տղերանցի մինը վերցնում ա, խորհրդավոր ասում իր ընկորը.— Օթախը շատ լավն ա, ամեն բան կարգին, սարգին՝ թե ներսից, թե դրսից, ամա ափսոս որ օջախի բըխուրակը մի քիչ, մի այնոյին ծուռն ա։
Աղջիկը գլխի ա ընկնում, որ խոսքն իրան վրա ա, ձեռաց ետ ա դառնում ու քաղաքավարի ասում.— Մեր պատվական ղոնախնի, դուք բխուրակի ծռնությունը միք մտիկ անիլ, այլ ընդուր թամաշ արեք, թե ծուխը ոնց ա թարազ[1] դուս տանում...

[1] Թարազ—Կանոնավոր—Ծ. Բ.։

Տղերքը խելքի մաղ են ըլում աղջկա շնորքի, տեսքի ու խելքի վրա, նրանցից մինը աղաք ա կանգնում ու ասում.— Խանում աղջիկ, ես պետք ա քեզ ասեմ, որ մենք հասարակ ճամփորթ չենք։ Ես էս երգրի իշխանի որդին եմ, սա էլ իմ ընկերն ա, մենք ղըլըղիս[2] փոխել ենք, մեր աշխարքը ման ենք գալի, որ մեր ժողովրդի չարն ու բարին իմանանք։ Ես մի նպատակ էլ ունեմ։ Ման եմ գալի ինձ հարմար մի խելոք նշանած ճարել։ Հմի քեզնից լավը սաղ աշխարում չեմ գտնիլ։ Դու ես, որ կաս ինձ համար, թե դուն էլ համաձայն ես, ձեռքդ տուր։ Ու մենք հույս աստոծ— բախտավոր կըլինք։
Աղջիկն էլ հո էդ բանի համար թլկտում էր. գեղըցու աղջիկ՝ իշխանի հարս, ըտուց ավել ի՞նչ կուզեր։ Ու նրանք նշանվում են, ետո պսակվում ու իրանց մուրազին հասնում[3]։

---

[2] Ղըլըղնիս—շորներս—Ծ. Բ.։

[3] «Ես նաղլը որ վերջացրի, Աղասուն խնդրեցի մի լավ հեքիաթ սկսել, որ մեզ համար «նարդիվան դառնա», «ձորը բարձրանանք»։ Աղասին սկսեց...»։ Ծ. Բ.։